

1.4. Սույն Կանոնակարգի իրավական հիմքերն են «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, ՀՀ ԿԳ նախարարի՝ 2007 թ. դեկտեմբերի 6-ի թիվ 1193-Ն հրամանով հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը», Հիմնադրամի կանոնադրությունը և այլն:

2. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

2.1. Հիմնադրամի տվյալ տարվա մասնագիտությունների ընդունելության ցանկը, ըստ ԿԳՄՄՆ-ի ներկայացման, մինչև տվյալ տարվա ապրիլի 1-ը, հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հիմնադրամի տվյալ տարվա մասնագիտությունների ընդունելության ցանկը ներառում է՝

- 1) կրթության ձևը (առկա).
- 2) մասնագիտությունների ցանկը.
- 3) ըստ մասնագիտությունների՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) ընդունելության տեղերի թիվը.
- 4) ըստ մասնագիտությունների՝ Հիմնադրամի հայտերի հիման վրա ԿԳՄՄ-ի կողմից հաստատված ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման (վճարովի), առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի ուսուցման տեղերը:

2.2. Մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպելու նպատակով ռեկտորի հրամանով ձևավորվում է դիմորդների փաստաթղթերն ընդունող հանձնաժողով:

2.3. Փաստաթղթերի ընդունման գործընթացին նախորդող շաբաթվա ընթացքում դիմորդների փաստաթղթերն ընդունող հանձնաժողովի կողմից Հիմնադրամի պաշտոնական կայքէջում և/կամ զանգվածային լրատվամիջոցներով տրվում է հայտարարություն՝ ընդունելության մասնագիտությունների, տեղերի և կանոնների վերաբերյալ:

2.4. Մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպելու և անցկացնելու համար ռեկտորի հրամանով և նախագահությամբ ձևավորվում է մրցութային հանձնաժողով՝ պրոռեկտորների, ֆակուլտետների ղեկանների, ամբիոնների վարիչների և Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի փոխտնօրենի անդամակցությամբ:

2.5. Մրցութային հանձնաժողովը, ֆակուլտետի և ամբիոնի կարծիքների հաշվառմամբ, ուսումնասիրում և քննարկում է մրցութի հավակնորդների ցուցակները և ըստ

մասնագիտությունների, բազային կրթության ընթացքում ուսումնասիրած դասընթացների ցանկի հաշվառմամբ, իրականացնում է մրցույթ:

Հիմնադրամի ռեկտորը մրցութային հանձնաժողովի կողմից ներկայացրած առաջարկությունների հիման վրա հրամանագրում է մրցութային հիմունքներով մագիստրատուրա ընդունված դիմորդներին:

3. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Մագիստրատուրա մրցութային կարգով կարող են ընդունվել բակալավրի, դիպլոմավորված մասնագետի և մագիստրոսի որակավորում ունեցող ՀՀ քաղաքացիները: Մագիստրոսի աստիճան ունեցող քաղաքացիները 2-րդ մագիստրոսական կրթություն կարող են ստանալ միայն վճարովի հիմունքներով:

Օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք մագիստրատուրա կարող են ընդունվել միջպետական և միջգերատեսչական պայմանագրերի կամ համաձայնագրերի հիման վրա, լրացուցիչ տեղերի հաշվին, ինչպես նաև վճարովի հիմունքներով սեփական նախաձեռնությամբ:

3.2. Մագիստրատուրա ընդունվելու համար դիմումը տրվում է Հիմնադրամի ռեկտորի անունով (լրացվում է տեղում)՝ կցելով հետևյալ փաստաթղթերը՝

ա) բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի դիպլոմի և դրա հավելվածի (միջուկի) պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ իրենց կրթության համարժեքության մասին),

ա) ինքնակենսագրություն,

բ) 3 լուսանկար (3x4 չափի),

գ) հրատարակված կամ հրատարակման ընդունված գիտական աշխատությունների ցուցակ (դրանց առկայության դեպքում),

դ) ՀՀ օրենքներով սահմանված ուսման վարձի լրիվ փոխհատուցման իրավունքից օգտվելու կարգավիճակը հավաստող և այլ փաստաթղթեր:

3.3. Մագիստրատուրայի ընդունելությունը անցկացվում է 2 փուլով.

3.3.1. Ըստ մասնագիտությունների մագիստրատուրայի ընդունելությունն առաջին փուլով անցկացվում է ՀՀ կառավարության հաստատած՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերի համար:

3.3.2. 1-ին փուլով մագիստրատուրայի ընդունելությունը՝ ՀՀ Կառավարության կողմից հաստատված տվյալ ուսումնական տարվա առկա ուսուցմամբ և պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերի համար, իրականացվում է համապատասխան տարվա գորակոչը կազմակերպելու մասին ՀՀ Կառավարության որոշմամբ նախատեսված ժամկետներում, որին կարող են մասնակցել բակալավրիատի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան ունեցող շրջանավարտները:

3.3. 3.Ըստ մասնագիտությունների մագիստրատուրայի ընդունելությունը երկրորդ փուլով անցկացվում է ԿԳՄՄՆ-ի կողմից հաստատված ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ (վճարովի) ուսուցման տեղերով:

3. 3.4. Երկրորդ փուլով մագիստրատուրայի ընդունելությունն անցկացվում է մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ը, ըստ հաստատված ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) ուսուցման տեղերի:

3.4.Մագիստրատուրայի ընդունելության մրցույթն անցկացվում է հետևյալ չափանիշների առաջնահերթությամբ.

- 1) նախորդ ուսումնառության ծրագրում ցուցաբերած ընդհանուր առաջադիմության գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով,
- 2) մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով,
- 3) տպագրված կամ տպագրման ընդունված գիտական աշխատությունների, թեզիսների և զեկուցումների առկայությամբ,
- 4) ոչ մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով:

3.5. Հիմնադրամը մրցույթով անցած մագիստրոսների հետ կնքում է պայմանագիր, որի տեքստը հրապարակվում է ընդունելության հայտարարության հետ և նախապես տրամադրվում դիմորդներին:

4. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅՈՒՄ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

4.1. Մագիստրոսները բուհի աշխատողների հետ հավասարապես օգտվում են գիտական սարքավորումներից, լաբորատորիաներից, համակարգչային տեխնիկայից, գրադարանից, հանրակացարաններից և այլ հնարավորություններից:

4.3. Մագիստրոսի կրթական ծրագրով ուսումնառությունն ավարտած և ամփոփիչ

ատեստավորում անցած անձանց տրվում է բուհի ավարտական փաստաթուղթ (մագիստրոսի դիպլոմ)՝ համապատասխան ներդիրով:

5. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՑԹՆԵՐ

5.1. Սույն Կանոնակարգը, վերջինիս մեջ առաջարկվող փոփոխություններն ու լրացումները հաստատում է Հիմնադրամի Գիտական խորհուրդը:

5.2. Սույն Կանոնակարգը ուժի մեջ է մտնում հաստատման պահից: